CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

Հավելված 5.2
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/8-Ա * ծածկագրով
հրավերի

«26» 02 2025

№ CCO/0395

ԵՐԱՇԽԻՔ N CCO/0395
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Ջրային կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ-ի և «ԲԼԵՍԿ» ՍՊԸ-ի կոնսորցիումի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 20.02.2025թ.-ին կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/8-Ա-1 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» /*Չափաբաժին 2, Չափաբաժին 3*/ (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 12,757,770.00 (տասներկու միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է կանխավճարի գումարը պրինցիպալի՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում սպասարկվող թիվ 19300 236192400 հաշվարկային հաշվին փոխանցելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 30.09.2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ anna.sargsyan@scws.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-24/8-Ա-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավասու անձ՝

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291
ք. ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/1
Վարկային գործառնությունների համար

Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature

For Credit Operations
"CONVERSE BANK" CJSC, 00000291
26/1 V. SARGSYAN str., YEREVAN

Պատասխանատու՝ Ն.Ղալումյան/ 010 511 211 (2225)

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
+374 10 511 211

Converse Bank CJSC
26/1 V. Sargsyan, Yerevan, 0010, RA
+374 10 511 211
conversebank.am

01431